7/14/2023

X

ԿԱՐԻՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Signed by: MKHITARYAN KARINE 7402800303

# ՏՆՕՐԵՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2022-2023 ուստարի

«ԵՐԵՎԱՆԻ ԱԼ. ԲԼՈԿԻ ԱՆՎԱՆ Հ. 122 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

| | | |
|---|---|---|
| ✓ | **Տնօրենի անուն, ազգանուն, հայրանուն** | Կարինե Սամվելի Մխիթարյան |
| ✓ | **Կրթություն/մասնագիտություն** | Մանկավարժական գիտությունների թեկնածու/ անգլերեն լեզու |
| ✓ | **Դպրոցի հասցե, հեռախոս, էլ. հասցե** | Արզումանյան 5, 010 391080<br>alblok-122@mail.ru |
| ✓ | **Դպրոցի կառավարման խորհրդի անդամներն են՝**<br>1. Թամարա Հենրիկի Ջալինյան – ՀՀ ԿԳՄՍՆ արտաքին կապերի և սփյուռքի վարչության սփյուռքի հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ<br>2. Արևիկ Դավիթի Պետրոսյան – «Երևանի Արամայիս Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ, տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ<br>3. Անահիտ Սերյոժայի Համբարձումյան – Երևանի «Աջափնյակ» վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ<br>4. Հրաչյա Լավրենտիի Ազրոյան – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության առաջին կարգի մասնագետ<br>5. Լիլիթ Սամվելի Աթոյան – Երևանի «Աջափնյակ» վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի և զովազդի բաժնի գլխավոր մասնագետ<br>6. Արմինե Ալբերտի Գալստյան – Կառավարման խորհրդի նախագահ, «Երևանի Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի<br>7. Հերմինե Աշոտի Գրիգորյան – Կառավարման խորհրդի քարտուղար, «Երևանի Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերեն լեզվի ուսուցչուհի<br>8. Մանուշ Լավրենտիի Միրզոյան – Ծնողական խորհրդի ներկայացուցիչ<br>9. Անուշ Սարգսի Արզումանյան – Ծնողական խորհրդի ներկայացուցիչ | |

«Երևանի Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի **<u>առաքելությունն</u>** է սովորողներին տալ ազգային հենքի վրա որակյալ կրթություն՝ միաժամանակ նախապատրաստելով նոր տեխնոլոգիական ուսուցմանը, ինչպես նաև ձևավորել համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության ու մարդասիրության ոգով դաստիարակված և պատասխանատվության զգացումով օժտված քաղաքացիներ, որոնցից յուրաքանչյուրը կյանքում կլինի կարողունակ և հաջողակ քաղաքացի։

«Երևանի Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի **<u>տեսլականն</u>** է սովորողների մոտ ձևավորել այնպիսի կարողունակություններ, արժեքային համակարգ և

դիրքորոշում, որոնք նախ հնարավորություն կտան ընտրելու կյանքի ընթացքում իրենց բնույթին համապատասխան մասնագիտություն, նաև այնպիսիք, որոնք կկիրառվեն ողջ կյանքի ընթացքում:

2022-2023 ուստարվա ընթացքում դպրոցի նպատակն է եղել բացի գիտելիքից և կարողունակություններից սովորողների մոտ ձևավորել հետևյալ մարդկային որակները՝

| |
|---|
| հետազոտող, մտածող, հաղորդակցվող, համարձակ, բանիմաց, սկզբունքային, հոգատար, լայնախոհ, հավասարակշռված, վերլուծող |

Ուսումնական տարվա ավարտին դպրոցում շնորհակալագրեր են ստացել այն աշակերտները, ովքեր մանկավարժական խորհրդի որոշմամբ օժտված են այս որակներով:

## Շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան

Ներկայումս դպրոցի շենքը կառուցապատվում է: Շենքի կառուցապատման աշխատանքները պետք է ավարտվեին 2023թ. մարտին, սակայն շինարարական աշխատանքների ձգձգման պատճառով շահագործումը հետաձգվում է:

Ալ. Բլոկի անվան հ.122 հ/դ-ը 2022-2023թթ. ընթացքում ուսումնական գործընթացը իրականացրել է Պ. Ցավրովի անվան հ. 131 հ/դպրոցում 2-րդ հերթափոխով՝ սահմանված նորմերով, սահմանված աշխատանքային կարգապահությամբ, ժամը 13:30-19:15:

Սովորողները դպրոց մուտք են գործել դպրոցի բակի կողմից առանձին մուտքերով, այսինքն՝ գործում էին առանձին մուտքեր տարրական և հիմնական դպրոցի սովորողների համար: Սովորողները մուտք են գործել ջերմաչափվելով, և կատարվել է հսկողություն համապատասխան աշխատակիցների կողմից:

Վերահսկվել է հաստատությունում հակահամաճարակային պահանջների և հակահրդեհային անվտանգության կանոնների պահպանումը:

Տարվա ընթացքում պարբերաբար կատարվել է դպրոցի բակի մաքրության աշխատանքներ:

Դպրոցի գույքը արխիվացված է, որի համար ստեղծվել է 7 հոգուց բաղկացած հանձնաժողով: Գույքը մասամբ օգտագործվել է դասասենյակներում, ուսուցչանոցում, գրադարանում և բուժկետում: Պարբերաբար անցկացվել է գույքի զննում, և ողջ ուսումնական տարվա ընթացքում վերանորոգման աշխատանքներ՝ ըստ անհրաժեշտության: Գույքի որոշակի քանակ պայմանագրային հիմքով հանձնվել է Պ. Ցավրովի անվան հ. 131 հ/դ-ին օգտագործման նպատակով: Հաստատությունը պարբերաբար ապահովվել է գրասենյակային պիտույքներով և առօրյա օգտագործման տնտեսական պարագաներով, որը գրանցվել է

գրանցամատյանում և հաշվով հանձնվել տեխաշխատողներին: Ինչպես նաև, որոշակի մարզագույք է նվիրվել դպրոցին ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից:

Մշտապես վերահսկվել է տեխաշխատողների աշխատանքը: Հաստատությունում պահպանվել է աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները, որն իրականացվել է ցերեկային և գիշերային պահակների կողմից:

Նախատեսվում է 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի ընթացքում դպրոցի գործունեությունը կազմակերպել Երևանի Պ. Ցավորովի անվան հ. 131 հ/դ-ի շենքում, իսկ 2-րդ կիսամյակը՝ նորակառույց շենքում, որի ընթացքում միջոցներ կձեռնարկվեն դպրոցի ուսումնանյութական բազան հարստացնելու ուղղությամբ:

## Դպրոցի աշխատակիցները

Ուստարվա ավարտին դպրոցն ուներ ընդհանուր առմամբ **74** աշխատակից, որից ուսումնաօժանդակ անձնակազմը՝ **10** աշխատակից, մանկավարժական աշխատողներ՝ **60,** վարչական անձնակազմ՝ **4:**




Հաստատությունում աշխատում են մասնագիտական հմտություններով և բարձրորակ մանկավարժներ: Մանկավարժական համակազմը բաղկացած է հիմնականում միջին տարիքի ուսուցիչներից՝ 55-65 տարեկան: Դպրոցում աշխատում է միջին մասնագիտական կրթություն ունեցող միայն 1 ուսուցիչ՝ Դարբինյան Էմմա, ով 31 տարի աշխատել է որպես կերպարվեստի և տեխնոլոգիայի ուսուցիչ: Այժմ կամավոր ատեստավորման հայտ է ներկայացրել, բայց միաժամանակ ստացել է նաև համապատասխան ծանուցում:

Դպրոցում աշխատում են նաև 2 ուսուցիչ, ովքեր մասնակցել են կամավոր ատեստավորմանը հետևյալ ցուցանիշներով՝

1. Հաբեթյան Նաղյա (հայոց լեզվի և գրականության ուսուցիչ) – հաղթահարել է 70%-ի շեմը

2. Մկոյան Ֆիալետա (ֆիզիկայի ուսուցիչ) – հաղթահարել է 80%-ի շեմը

Դպրոցի տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ, «ֆիզիկա»-ի ուսուցիչ Անուշ Աղաջանյանն ունի առաջին տարակարգ:

2022-2023 ուստարվա ընթացքում դպրոց են ընդունվել 9 ուսուցիչ: Բոլորն ունեն մանկավարժական բարձրագույն կրթություն:

2022-2023 ուստարվա ընթացքում պարտադիր ատեստավորման են ներկայացված 9 ուսուցիչ:

## <u>Կոմպլեկտավորված դասարանների և սովորողների թիվը</u>

Դպրոցի սահմանային տեղերը տրված են հին շենքի տարածքին համապատասխան, ըստ որի՝

- ✓ Տարրական հանրակրթական – 328 սահմանային տեղով (ուստարվա ավարտին՝ 310 սովորող, որից 125-ը՝ հայկական, 185-ը՝ ռուսական )
- ✓ Հիմնական հանրակրթական – 614 սահմանային տեղով (ուստարվա ավարտին՝ 380 սովորող, որից 133-ը՝ հայկական, իսկ 247-ը՝ ռուսական)




2022-2023 ուստարվա սկզբում դպրոցում ձևավորվել էր <u>27</u> դասարան, իսկ դեկտեմբերին՝ արդեն <u>30</u> դասարան, որից <u>**12-ը՝ հայկական**</u>, <u>**18-ը՝ ռուսական**</u>:

2021-2022 ուսումնական տարվա ավարտին սովորողների թիվը կազմում էր <u>613:</u> 2022-2023 ուսումնական տարվա սկզբին սովորողների թիվը կազմում էր <u>628</u> սովորող, իսկ ուսումնական տարվա ավարտին՝ <u>690</u> սովորող, որոնցից ներառական կրթության մեջ ընդգրկված էին <u>19</u> աշակերտ: Քանի որ դպրոցն աշխատում է երկրորդ հերթով և միակն է

«Աջափնյակ» վարչական շրջանում, որ ունի ռուսերեն ուսուցմամբ դասարաններ, սովորողների թվի աճը հիմնականում պայմանավորված էր այդ դասարանների ընդլայնմամբ՝ պայմանավորված վերջին աշխարհաքաղաքական դեպքերով:




2022-2023 ուսումնական տարվա ընթացքում՝

✓ Դպրոցից դուրս է եկել **72** սովորող՝ տեղափոխվելով ՌԴ, այլ մարզեր և Երևանում գործող այլ դպրոցներ

✓ Դպրոց է եկել **119** աշակերտ հիմնականում ՌԴ-ից, ՌԻՀ-ից, ՀՀ այլ մարզերից և Երևանում գործող այլ հիմնական դպրոցներից

✓ Սովորողների շարժի արդյունքում ուստարին ավարտել է **690** աշակերտ

✓ 9-րդ դասարանում ընդգրկված սովորողների թիվը կազմում է **80,** սակայն հիմնական կրթության վկայական ստացել է **76**-ը, իսկ 9-րդ դասարանի թվով **4** սովորող երկտարեցի են:

## Գրադարանային ֆոնդ

- ✓ Դասագրքեր – 3623
- ✓ Ռուսական դասագրքեր – 1501 (2022-2023 ուստարվա ընթացքում համալրված տարբեր աղբյուրներից )
- ✓ Գեղարվեստական գրականություն՝ հայերեն – 241
- ✓ Գեղարվեստական գրականություն՝ ռուսերեն – 820

- ✓ Ուսումնամեթոդական գրականություն – 113
- ✓ Էլեկտրոնային տեղեկատվական՝ համակարգիչ

Դասագրքերի վարձավճարները ժամանակին փոխանցվել են բանկային հաշվեհամարին, իսկ սոցիալապես անապահով սովորողների դասագրքերը տրամադրվել են անվճար՝ համաձայն ցուցակի և տեղեկանքի։

Գրքային ֆոնդը ազատվել է հնամաշ օրինակներից, իսկ գեղարվեստական մասը համալրվել է շնորհիվ նվիրատվությունների։ Կարգի են բերվել հնամաշ, սակայն պիտանի դասագրքերն ու գրքերը։

Դասագրքերը տրամադրվել և հավաքվել են պայմանագրերով։ Մայիսի 25-ից հավաքվել են բոլոր դասարանների դասագրքերը, բացառությամբ 1ա դասարանի (դասվար՝ Նարինե Հունանյան), որի սովորողները կհանձնեն օգոստոսին։

Գրադարանը մի քանի անգամ համալրվել է ռուսական դասագրքերով միջազգային համագործակցության շնորհիվ, մասնավորապես՝

- ✓ Շուրջ 1144 դասագիրք փոխանցել է Ռուսաստանի մշակույթի և կուլտուրայի կենտրոնը
- ✓ 185 դասագիրք փոխանցել է մեր քույր-դպրոց ք. Սոլնեչնոգորսկի Ալ. Բլոկի անվան № 1 ճեմարանը՝ որպես բերագործություն
- ✓ Շուրջ 400 դասագիրք փոխանցել է Մոսկվայի թիվ 752 դպրոցը՝ որպես բարեգործություն

Այնուամենայնիվ, շենքային պայմաններից ելնելով՝ գրադարանը չի կարողացել ընդլայնել իր գործունեությունը և աշխատել ողջ ներուժով։

## Մեթոդական միավորումների կատարած աշխատանք

2022-2023 ուստարում Երևանի Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոցում ձևավորվել է 6 մասնախումբ՝

1. Պատմաբանասիրական և ՆԶՊ (ղեկավար՝ Հ. Ղևոնդյան)
2. Օտար լեզուներ (ղեկավար՝ Հ. Գրիգորյան)
3. Բնագիտական (ղեկավար՝ Ի. Ծատուրյան)
4. Մաթեմատիկական և ինֆորմատիկա (ղեկավար՝ Ի. Ոսկանյան)
5. Փունջ (ղեկավար՝ Ա. Հայրապետյան)
6. Տարրական (ղեկավար՝ Ք. Ստեփանյան)

Մեթոդական միավորների աշխատանքները ղեկավարել է տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ Ա. Աղաջանյանը։

2022-2023 ուստարվա ընթացքում գումարվել է 13 նիստ։ Իրենց առաջին նիստերի ժամանակ ընտրվել են նախագահներ և հաստատվել են տարեկան աշխատանքային

պլանները՝ հաշվի առնելով օգնստոսյան սեմինար-խորհրդակցություններում ստացված առաջարկություններն ու ցուցումները: Ամիսը մեկ անգամ տեղի ունեցած նիստերում քննարկվել են տարեկան պլանով նախատեսված հարցերը և կազմվել համապատասխան արձանագրություններ:

Ուսումնական տարվա սկզբին ուսուցիչներն ապահովվել են առարկայական ծրագրերով ու մեթոդական գրականությամբ, քննարկվել ու հաստատվել է մեթոդական միավորումների տարեկան աշխատանքային պլանը, իսկ կիսամյակների վերջում յուրաքանչյուր մեթոդական միավորման նախագահ տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալի հետ միասին ստուգել է տվյալ միավորման բոլոր անդամ-ուսուցիչների ծրագրի կատարողականը:




Բոլոր մեթոդական միավորների կողմից կազմակերպվել են բաց դասեր և միջոցառումներ, որոնք աչքի են ընկել իրենց բովանդակությամբ, հետաքրքրությամբ, ժամանակակից դասին ներկայացվող պահանջների կիրառմամբ և դաստիարակչական տարրերով:

## Դասացուցակի կազմում

Դասացուցակը կազմելիս հաշվի է առնվել դասաժամերի օպտիմալ հարաբերակցությունը, ինչպես նաև օրվա և շաբաթվա ընթացքում ուսումնական առարկաների ճիշտ հաջորդականությունը, ինչը դժբախտաբար շատ հաճախ ստիպված ենք եղել խախտել մի քանի հանգամանքներով պատճառով՝

- ✓ Երկրորդ հերթափոխ
- ✓ Ուսուցիչների համատեղում, ծանրաբեռնվածություն, ընտանեկան կարգավիճակ
- ✓ Ուսուցիչների, մասնավորապես՝ աշխարհագրության ուսուցչի, պակաս հատկապես ռուսական դասարաններում,

Այս առումով դպրոցի թույլ կողմերից եղել է այն հանգամանքը, որ մի քանի անգամ փոփոխվել է դասացուցակը՝ վերը նշված հանգամանքներով պայմանավորված տեղի ունեցած ուսուցիչների փոփոխության պատճառով:

❖ **2022-2023 ուստարվա ընթացքում ուսուցման որակի ստուգման նպատակով կատարվել են վերահսկողական աշխատանքներ տարբեր ուղղություններով.**

*1.* ***<u>Մնացորդային գիտելիքի ստուգում</u>*** – 29.09.22թ. -07.10.22թ ժամանակահատվածում իրականացվել է մնացորդային գիտելիքների ստուգում 5-րդ և 9-րդ դասարաններում «Մաթեմատիկա», «Մայրենի», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն» և «Հայոց լեզու» առարկաներից:




Գրավոր աշխատանքների վերլուծության արդյունքներից պարզ դարձավ հետևյալը՝

✓ Թե՛ հայկական և թե՛ ռուսական 5-րդ դասարաններում «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաների մնացորդային գիտելիքները որակապես բավականին բարձր են, քանի որ վերջերս են հանձնել 4-րդ դասարանի գիտելիքի ստուգում տվյալ առարկաներից, և գիտելիքը պահպանվել է, ինչը, բնականաբար, վկայում է համապատասխան դասարաններում դասվարների կատարած որակյալ և բարեխիղճ աշխատանքի մասին:

✓ Հայկական 9-րդ դասարաններում «Հայոց լեզու» առարկայից մնացորդային գիտելիքի ցուցանիշն ավելի բարձր է, քան ռուսական 9-րդ դասարաններում, և դա բնական է, եթե հաշվի առնենք ՌԴ քաղաքացիների (այդ թվում նաև ազգությամբ հայ քաղաքացիների) աննախադեպ ներգաղթը ՀՀ, ովքեր չգիտեին կամ շատ վատ գիտեին հայերեն, և համապատասխան ուսուցիչները բավական հմտորեն կիրառում էին շերտավոր ուսուցում՝ սկսելով տառուսուցումից և ցուցաբերելով անհատական մոտեցում յուրաքանչյուր սովորողի:

✓ Հայկական 9-րդ դասարաններում «Հանրահաշիվ» առարկայից մնացորդային գիտելիքի ցուցանիշն ավելի ցածր է, քան ռուսական 9-րդ դասարաններում, ինչի արդյունքում, որոշվեց անմիջապես բոլոր դասարաններում ներմուծել շերտավոր ուսուցում, որն իր հերթին ենթադրում էր խմբային և զույգային աշխատանք՝ զարգացնելով սովորել սովորելու կարողունակություն:

2. ***Առարկայական օլիմպիադաներ*** – 2022թ. դեկտեմբերի 5-9-ը ընկած ժամանակահատվածում մեթոդական միավորումների կազմած առաջադրանքներով կազմակերպվել և անցկացվել է առարկայական օլիմպիադաների ներդպրոցական փուլը «Անգլերեն», «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Հայոց պատմություն» և «ՆԶՊ» առարկաներից, որին մասնակցել են 47 սովորողներ: Տարածքային փուլ անցան 9 սովորող (6 սովորող՝ «Անգլերեն»-ից, իսկ 3 սովորող՝ «Ռուսաց լեզու»-ից): Տարածքային փուլը հաղթահարեցին և անցան քաղաքային փուլ 2 սովորող՝ մեկը հայերեն ուսուցմամբ դասարանից էր, մյուսը՝ ռուսերեն ուսուցմամբ դասարանից: Վերջիններս մասնակցել են «Անգլերեն» և «Ռուսաց լեզու» առարկայական օլիմպիադաներին և հավաքել բարձր միավորներ, սակայն չեն անցել հանրապետական փուլ:

ԲՏՃՄ առարկաներից օլիմպիադան անցկացվել է 21.11.2022-05.12.2023թ. ընկած ժամանակահատվածում, սակայն տարածքային փուլի մասնակիցներ չենք ունեցել: ԲՏՃՄ առարկաներից միջին և միջինից ցածր ցուցանիշը պայմանավորված է մի քանի հանգամանքներով.

✓ Երեք տարի շարունակ երկրորդ հերթափոխով աշխատելը (13:30-19:15), ինչը բնականաբար նպաստում է սովորողների մտավոր ակտիվության նվազմանը,

✓ Բնագիտական լաբորատորիաների բացակայությունը

✓ Շենքային պայմանների և երկրորդ հերթափոխի պատճառով համապատասխան խմբակների բացակայությունը

3. ***Տարրական դասարաններում ընթերցանության մշտադիտարկումներ*** – 2022-2023 ուստարվա ընթացքում իրականացվել է ընթերցանության մշտադիտարկումներ հայերենով և ռուսերենով ուսուցմամբ 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարաններում: Այդ ընթացքում հայերեն ուսուցմամբ դասարաններում ստուգվել է հայերեն լեզվով, իսկ ռուսերեն ուսուցմամբ դասարաններում՝ համապատասխանաբար ռուսերեն լեզվով, բարձրաձայն ընթերցանության տեխնիկան, գնահատվել է կարդալու և ընկալելու կարողությունը, ինչպես նաև առոգանությունը և ներկայացվել է հաշվետվություն/վերլուծություն: Ընթերցանության մշտադիտարկումները տեղի են ունեցել հոկտեմբեր-դեկտեմբեր և մարտ-ապրիլ ամիսներին՝ մշտապես տնօրենի և տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալի անմիջական մասնակցությամբ: Ուսումնական տարվա ավարտին բոլոր ծնողներին են հանձնվել «Ընթերցանության տեխնիկայի անձնագրեր», որտեղ մանրամասն ներկայացված են տվյալ սովորողի ցուցանիշներն ու դասվարի առաջարկությունները:

*4. Տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքներ* – 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում տրվել են տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ 3-րդ, 4-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններում «Մայրենի», «Մաթեմատիկա», «Հայոց լեզու», «Հանրահաշիվ, երկրաչափություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից: Կազմվել է համապատասխան հաշվետվություն/վերլուծություն: Նշված դասարանների ընտրությունը պայմանավորված էր նրանով, որ 4-րդ և 9-րդ դասարանները քննական դասարաններ են, իսկ 3-րդ և 8-րդ դասարանները՝ նախաքննական, ինչը թույլ կտար ուսուցչին ժամանակին ներմուծել շերտավոր ուսուցում և սովորողներին նախապատրաստել գիտելիքի ստուգմանն ու քննություններին:




2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի սկզբին 4-րդ ռուսական դասարանը կիսվեց, քանի որ սովորողների թիվը գերազանցեց 35-ը, հետևաբար կարելի է ասել, որ ցուցանիշները կարող են փոքր-ինչ խաբուսիկ լինել դասարանների համակազմի հետ պայմանավորված: Տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ այս առարկաներից տրվել են և՛ առաջին, և՛ երկրորդ կիսամյակի ընթացքում: Համեմատելով երկու կիսամյակների արդյունքները՝ կարելի է փաստել հետևյալը.

- ✓ 4ա դասարանում «Մաթեմատիկա» առարկայի որակը նվազել է 27%-ով, «Մայրենի» առարկայի որակը աճել է 13%-ով
- ✓ 4բ դասարանում «Մաթեմատիկա» առարկայի որակը նվազել է 73%-ով (երկրորդ կիսամյակում փոխվեց առարկան դասավանդող ուսուցիչը), «Մայրենի» առարկայի որակը աճել է 14%-ով
- ✓ 4գ դասարանում «Մայրենի» առարկայի որակը նվազել է 6%-ով, իսկ «Ռուսաց լեզու» առարկայի որակը՝ 34%-ով




Համեմատելով երկու կիսամյակների արդյունքները՝ կարելի է փաստել հետևյալը.

- ✓ 9ա դասարանում «Հանրահաշիվ» առարկայի որակը աճել է 4%-ով, 9բ դասարանում նվազել է 1%-ով, 9գ դասարանում նվազել է 33%-ով, իսկ 9դ դասարանում նվազել է 27%-ով,
- ✓ 9ա դասարանում «Հայոց լեզու» առարկայի որակը նվազել է 18%-ով, 9բ դասարանում մնացել է անփոփոխ, 9գ դասարանում նվազել է 2%-ով, իսկ 9դ դասարանում նվազել է 37%-ով,
- ✓ 9գ դասարանում «Ռուսաց լեզու» առարկայի որակը նվազել է 6%-ով, իսկ 9դ դասարանում մնացել է անփոփոխ, 9գ դասարանում նվազել է 2%-ով, իսկ 9դ դասարանում՝ մնացել անփոփոխ:

Ռուսերեն ուսուցմամբ դասարաններում որակական ցուցանիշի նվազումը պայմանավորված է նոր ընդգրկված սովորողներով, ովքեր հայոց լեզուն ուսումնասիրել են ընդամենը վերջին 2 տարվա ընթացքում, և շատերի հետ կազմակերպվում էր նույնիսկ տառուսուցում:

***5. <u>Առարկայական ստուգարքներ</u>*** – 2022-2023 ուսումնական տարվա երկու կիսամյակների ընթացքում 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ դասարաններում տրվել են առարկայական ստուգարքներ բոլոր առարկաներից, նախապես կազմված ժամանակացույցին համապատասխան: Թեստերը քննարկվել և կազմվել են առարկայական մեթոդական միավորումների կողմից: Ստուգարքները անցկացվել են և՛ բանավոր, և՛ գրավոր, ինչպես նաև համակցված թեստերի միջոցով և ներառել են տվյալ կիսամյակի ողջ ծրագրանյութը: ԿԱՊԿ ունեցող սովորողների համար կազմվել են առանձին աշխատանքներ իրենց ԱՈՒՊ-ներին համապատասխան: Բոլոր առարկայական ստուգարքներն անցկացվել են տնօրենի և տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալի անմիջական մասնակցությամբ, «Անգլերեն» առարկայի բանավոր ստուգարքը բոլոր դասարաններում անցկացրել է անձամբ տնօրենը դասավանդող ուսուցիչների հետ միասին:

Առարկայական ստուգարքների արդյունքները գնահատվել են բավարար, բացի «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հայ եկեղեցու պատմություն» առարկաներից, որը գնահատվել է «վատ»: Մանկավարժական խորհրդում քննարկելուց հետո, որոշվել է կազմակերպել կոնսուլտացիաներ, ծրագրային նյութը բաց թողած սովորողների համար: Նախապես կազմված ժամանակացույցին համապատասխան կազմակերպված անցկացվել են կոնսուլտացիաներ բոլոր առարկաներից:

***6. <u>Հեռավար և տնային ուսուցում</u>*** – 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ծնողի դիմումի և բժշկի տեղեկանքի հիման վրա իրականացվել է տնային և հեռավար ուսուցում՝ գործածության մեջ դնելով տվյալ սովորողի համար կազմված անհատական ուսումնական պլան և դասացուցակ: Առկա են համապատասխան առաջադրանքները, սովորողի կատարած գրավոր աշխատանքները, որոնց հիման վրա էլ վերջինս գնահատվել է: Հեռավար ուսուցումը կազմակերպվել է ZOOM հարթակում: Տնային ուսուցում կազմակերպվել է մեկ սովորողի համար, իսկ հեռավար ուսուցում՝ 15 սովորողի համար:

***7. <u>120-200 ժամ և ավելի բացակայություն ունեցող սովորողներ</u>*** - 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում խիստ վերահսկողություն է իրականացվել բոլոր սովորողների հաճախելիության նկատմամբ: Հաշվի առնելով երկրորդ հերթափոխը՝ որոշ սովորողների թույլատրվել է հաճախել արտադպրոցական պարապմունքների (պար, սպորտ, արվեստ և այլն), եթե սովորողն ունի լուրջ ձեռքբերումներ: Թույլտվության հիմք են հանդիսացել ծնողի դիմումն ու տեղեկանք տվյալ հաստատությունից և, իհարկե, ծնողին տեղեկացվել է, որ բացակաները հաշվառվելու են:

Յուրաքանչյուր ամսվա վերջին ծնողներին ուղարկվել են համապատասխան ծանուցումներ, որտեղ նշված է սովորողի բացակայությունների քանակը և ներկայացված են դրանից բխող հետևանքները: Այնուամենայնիվ, առաջին կիսամյակում, երկրորդ կիսամյակում և ուստարվա ընթացքում 2-9-րդ դասարաններում ընդգրկված թվով 49 սովորող ունեցել է 120-200 ժամ բացակայություն, իսկ 2 սովորող՝ 229 ու 263 ժամ բացակայություն: Վերջիններս չեն տեղափոխվել հաջորդ դասարան և դառնալով երկտարեցի՝ կարգի համաձայն պետք է կրկնեն 2022-2023 ուստարվա ծրագրանյութը: Մնացած 49 սովորողներները, կարգի համաձայն, հանձնել են լրացուցիչ քննություններ և ամփոփիչ ստուգողական աշխատանքներ ու նորմատիվներ բոլոր առարկաներից ողջ ուստարվա ծրագրանյութի հիման վրա՝ ըստ կազմված ժամանակացույցի:




Լրացուցիչ քննությունների և ստուգողական աշխատանքների արդյունքում որոշ սովորողներ ստացել են տարեկան 1-3 գնահատական և մնացել վերաքննության: Կարգին համապատասխան, սահմանված ժամանակացույցով և հանձնաժողովներով վերաքննությունների առաջին փուլը անցկացվել է 03.07.2023-07.07.2023թթ. ընկած ժամանակահատվածում 9-րդ դասարանի սովորողների համար, իսկ երկրորդ փուլը՝ 20.08.2023 - 30.08.2023թթ. ընկած ժամանակահատվածում մյուս սովորողների համար:



Բոլոր առարկաներից կազմակերպված լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների արդյունքում 9-րդ դասարանի թվով 4 սովորող հինգ և ավել առարկաներից տարեկան 1-3 գնահատական ստանալու հետևանքով դարձան երկտարեցի:

***8. <u>4-րդ դասարանի գիտելիքի ստուգում</u>*** – 2023թ. հունիսի 8-15-ն ընկած ժամանակահատվածում անցկացվել է գիտելիքների ստուգում 4-րդ դասարաններում ընդգրկված սովորողների համար «Մայրենի», «Մաթեմատիկա», իսկ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար նաև «Ռուսաց լեզու» առարկաներից և ամփոփվել արդյունքները:




***9. <u>9-րդ դասարանի ավարտական քննություններ</u>*** – 2023թ. հունիսի 5-26–ը ընկած ժամանակահատվածում անցկացվել են ավարտական քննություններ 9-րդ դասարանի սովորողների համար «Հայոց լեզու», «Գրականություն», «Մաթեմատիկա», «Բնագիտություն», «Հայոց պատմություն», «Օտար լեզու», «Ֆիզկուլտուրա», իսկ ռուսերենով ուսուցմամբ դասարանի սովորողների համար նաև «Ռուս գրականություն» առարկաներից և ամփոփվել արդյունքները:

| № | Առարկա | Սովորողների թիվը | Մասնակիցների թիվը | Արդյունք % | Որակ % |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հայոց լեզու | 80 | 64 | 95% | 8% |
| 2. | Մաթեմատիկա | | 74 | 99% | 12% |
| 3. | Բնագիտություն | | 74 | 100% | 5% |
| 4. | Հայոց պատմություն | | 62 | 76% | 18% |
| 5. | Գրականություն | | 64 | 92% | 17% |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6. | Օտար լեզու | | Ռուսերեն – 17 | 100% | 59% |
| | | | Անգլերեն – 53 | 91% | 26 % |
| 7. | Ռուս գրականություն | | 45 | 100% | 47% |
| 8. | Ֆիզկուլտուրա | | 74 | 100% | 100% |

Ավարտական քննությու 29 սովորող ստացել են 1-7 միավոր և մնացել վերաքննության հետևյա




Հուլիսի 2-8-ը ընկած ժամանակահատվածում կազմակերպված վերաքննությունների ժամանակ սովորողները հաղթահարել են դրական շեմը:

***10. <u>Դասալսումներ</u>*** – 2022-2023 ուսումնական տարում ուսման որակի վերահսկման նպատակով կատարվել են բազմաթիվ դասալսումներ բոլոր մեթոդական միավորումներում: Հաստատված ժամանակացույցով յուրաքանչյուր միավորման հատկացվել է 2 շաբաթ: Դասալսումները հետապնդել են բազմաթիվ նպատակներ՝ ըստ յուրաքանչյուր առարկայի յուրահատկության:

Յուրաքանչյուր դաս քննարկվել է ուսուցչի հետ, վեր են հանվել ուժեղ և թույլ կողմերը: Դալասման ժամանակ ուշադրություն է դարձվել ընթացքի, նպատակի, վերջնարդյունքի, սովորողների վարքագծի, մասնակցության աստիճանի, սովորող-սովորող կապի, շերտավոր ուսուցման և խմաբային աշխատանքների վրա: Գրեթե բոլոր ուսուցիչներին տրվել է հանձնարարական դասը պլանավորել և իրականացնել՝ հաշվի առնելով վերը նշված կետերը: Ստուգվել է նաև օրվա դասի պլանի առկայությունը, ինչը երբեմն բացակայել է: Եղել են հաջողված, ավանդական մեթոդներով, ժամանակակից մեթոդներով և, իհարկե, ձախողված

դասեր: Բազմիցս արվել են համապատասխան դիտարկումներ, տրվել են առաջարկություններ և հանձնարարականներ:

Դասալսումներ կատարվել են ոչ միայն տնօրենության, այլև մեթոդական միավորումների նախագահների և անդամ-ուսուցիչների կողմից: Դասալսումները կրել են կառուցողական բնույթ, որոնց նպատակն է եղել իրականացնել փորձի փոխանակում, աջակցել միմյանց և ակնհայտ դարձնել հաջողված կիրառությունները, իսկ սկսնակ ուսուցիչների մոտ՝ մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով: Ակտիվ դասալսումներ են իրականացվել նաև պարտադիր ատեստավորված ուսուցիչների մոտ ստուգելու՝ արդյոք տիրապետում են նոր մեթոդներին, ՏՀՏ գործիքների կիրառությանը:

***11. <u>Մանկավարժական խորհրդի գործունեություն</u>*** – Մանկավարժական խորհրդի նիստերում քննարկվել են ուսումնադաստիարակչական աշխատանքներին առնչվող հարցեր, գնահատվել են հաջողությունները, արձանագրվել են բացթողումներն ու թերացումները: Մանկավարժական խորհրդի որոշմամբ հաստատվել են դասալսումների թերթիկը և հաստատվել ժամանակացույցերն՝ ըստ մեթոդական միավորումների:

Բոլոր նիստերի ժամանակ քննարկվել է էլեկտրոնային մատենավարությունը, վեր են հանվել բացթողումները: Մատենավարությունն իրականացվել է առանց եռօրյա ժամկետը խախտելու:

Մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ քննարկվել առարկայական օլիմպիադաների, տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքերի, ստուգարքների, գիտելիքների ստուգման և ավարտական քննությունների արդյունքները:

Շատ կարևորելով սովորողների մոտ համապատասխան արժեքների և դիրքորոշման ձևավորումը՝ խստագույն ուշադրություն է դարձվել վերջիններիս հաճախելիությանն ու վարքագծին և բոլոր դեպքերը մանրամասն քննարկվել են նիստերի ժամանակ: Յուրաքանչյուր խախտման դեպքում պատշաճ կերպով կիրառվել է սովորողների կողմից բացատրագրերի, իսկ ուսուցիչների կողմից զեկուցագրերի ներկայացման համակարգը, որոնց հիման վրա հրամանով տրվել են նկատողություն կամ խիստ նկատողություն սովորողներին: Այդ դեպքերը քննարկվել են նաև ծնողների հետ՝ պահանջելով վերջիններիս համագործակցությունն այդ համատեքստում: Միևնույն ժամանակ, մանկավարժական խորհրդի համաձայնությամբ դպրոցում ձևավորվել է էթիկայի հանձնաժողով, որտեղ քննարկվում են ուսուցչի կողմից բարեվարքության կանոնների խախտման դեպքերը: 2022-2023 ուստարվա ընթացքում էթիկայի հանձնաժողովում քննարկվել է երկու դեպք, կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ քննարկվել են նաև այն ծնողների դիմումներն ու բժշկի տեղեկանքները, որոնք դիմել են տնային կամ հեռավար ուսուցման համար: Համապատասխան ուսուցիչներին տրամադրվել է վարման հետ կապված մանրամասն աջակցություն և խորհրդատվություն:

Մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ քննարկվել են նաև դպրոցական բաղադրիչի բաշխումը, խմբակների ձևավորման անհրաժեշտությունը, 120-200 ժամ և ավել

բացակայություն ունեցող սովորողների ուսումնական տարվա ամփոփման, սոցիալապես անապահով սովորողների դասագրքերի վարձավճարը զեղչելու, հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների ընտրության, սովորողներին՝ գիտելիքների ստուգմանն ու ավարտական քննություններին թույլատրելու, սովորողներին խրախուսելու և կարգապահական տույժի ենթարկելու, 1-9-րդ դասարանի սովորողներին փոխադրելու, երկտարեկի սովորողների և գովասանագրով պարտևատրելու, 9-րդ դասարանի սովորողներին հիմնական կրթության վկայական տալու հարցերը և այլն:

*12.* ***Արտաքին գնահատում*** – արտաքին գնահատման նպատակով ԳԹԿ-ի կողմից իրականացվել է 4-րդ դասարանի սովորողների թեստավորում «Ես և շրջակա աշխարհը» առարկայից: Ինչպես նաև, «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվել է թեստավորում, որին մասնակցել են 4-րդ և 9-րդ դասարանի սովորողները, մի քանի դասավանդող ուսուցիչներ («Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Ֆիզիկա» առարկաներից) և տնօրենը՝ առարկայական գիտելիքների, դպրոցի կառավարման և այլ ընդհանուր խնդիրներ պարզելու և վերլուծելու նպատակով:

*13.* ***2022-2023 ուստարվա ընթացքում գերազանց առաջադիմություն ցուցաբերած սովորողներ*** – այս ուսումնական տարվա ընթացքում գերազանց առաջադիմություն են ցուցաբերել 39 սովորող, որոնք ընդգրկված են 2-8 դասարաններում: 9-րդ դասարանի սովորողների շրջանում գերազանց առաջադիմություն ունեցող սովորողներ չկան, հետևաբար, չեն տրվել նաև գերազանցության նշումով վկայականներ:




## Արտադասարանական խմբակներ

2022-2023 ուստարվա ընթացքում դպրոցում գործել են ԿԳՄՍՆ հաստատված հետևյալ խմբակները՝

✓ «Հայերեն բոլորի համար» - ծրագրում ներառված թեմաները համապատասխանում են ռուսերենով ուսուցմամբ դասարաններում ընդգրկված

սովորողների կարիքներին, ովքեր եկել են այլ երկրներից ու ընդգրկվել ռուսերենով ուսուցմամբ դասարաններում, և այդ երկրներում հայոց լեզուն չուսումնասիրելու պատճառով ծրագրային նյութը յուրացնելուն զուգահեռ կարիք ունեն տառուսուցման: Խմբակին հատկացվել է տարեկան 60 ժամ:

- ✓ «Գրական» - ծրագիրն օգնում է մեկնաբանելու, արժևորելու, ինքնուրույն կարծիք արտահայտելու կարողություն, գրական երկը ստեղծագործաբար վերլուծելու, գրականությունը որպես ինքնության ձևավորման, ինքնաճանաչողության, ազգային ինքնագիտակցության ընկալման առաջնային բաղադրիչ ընկալելու գիտակցում: Խմբակին հատկացվել է տարեկան 136 ժամ:
- ✓ «Ուրախ անգլերեն» - նախատեսված է երկրորդ դասարանի սովորողների համար, ովքեր խաղերի, պաստառների, խմբային աշխատանքների և երգերի միջոցով ծանոթանում են անգլերեն լեզվին և զարգացնում իրենց բանավոր խոսքը, ինչը օգնում է իրենց հաղթահարել երրորդ դասարանում այն որպես երկրորդ օտար լեզու ուսումնասիրելու ընթացքում առաջացած դժվարությունները հաղթահարելու հետ կապված հոգեբանական և ակադեմիական խնդիրները: Խմբակին հատկացված է տարեկան 64 ժամ:
- ✓ «Խոսենք ռուսերեն» - նախատեսված է առաջին դասարանի սովորողների համար, ովքեր խաղերի, պաստառների, խմբային աշխատանքների և երգերի միջոցով ծանոթանում են ռուսերեն լեզվին և զարգացնում իրենց բանավոր խոսքը, ինչը օգնում է իրենց հաղթահարել երկրորդ դասարանում այն որպես առաջին օտար լեզու ուսումնասիրելու ընթացքում առաջացած դժվարությունները հաղթահարելու հետ կապված հոգեբանական և ակադեմիական խնդիրները: Խմբակին հատկացված է տարեկան 60 ժամ:
- ✓ «Նկարչություն» - խմբակի ծրագիրը ներառում է որոշակի առանձնացված թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին ու հետաքրքրություններին և նպաստում են վերջիններիս գեղագիտական զարգացմանը: Խմբակին հատկացված էր տարեկան 39 ժամ:

Չնայած այն հանգամանքին, որ դպրոցը գործել է երկրորդ հերթափոխով և ունեցել է բազմաթիվ դժվարություններ շատ ծառայություններ պատշաճ կազմակերպելու առումով, այնուամենայնիվ, բազմաթիվ աշխատող ծնողների դիմումի հիման վրա, լիազոր մարմնի իմացությամբ և թույլտվությամբ, գործարկվել է նաև երկարօրյա խմբակ միայն տարրական դասարաններում ընդգրկված սովորողների համար, որը գործել է ամեն օր առավոտյան 8:30-ից մինչև 13:15: Երկարօրյա խմբակում իրականացվել է դասապատրաստում, զբոսանք, նախաճաշ, ընթերցանություն և խաղեր:

## <u>Աշխատանք սոցիալապես անապահով և դժվար դաստիարակվող սովորողների հետ</u>

Դասղեկների օգնությամբ առանձնացվել են սոցիալապես անապահովով, միակողմանի ծնողազուրկ, բազմազավակ ընտանիքի երեխա հանդիսացող սովորողները: Մանկավարժական խորհրդի համաձայնությամբ դպրոցի դասագրքերի ֆոնդից

վերջիններիս դասագրքեր տրամադրվել են անվճար հիմքով համապատասխան փաստաթղթերի առկայության պարագայում:

Միաժամանակ, հաշվառվել են նաև անցանկալի վարք ցուցաբերող և դժվար դաստիարակվող սովորողները, որոնց հետ տարվել են անհատական զրույցներ երբեմն նաև անչափահասների գծով տեսուչի ներգրավմամբ: Այս խոցելի խմբերի հետ ակտիվ աշխատել են նաև սոցիալական մանկավարժը և հոգեբանը՝ փորձելով վեր հանել և վերլուծել բոլոր հոգեբանական խնդիրներն ու ֆիզիոլոգիական զարգացման հետ կապված առանձնահատկությունները:




## ❖ 2022-2023 ուստարվա ընթացքում կատարված մասնագիտացված կրթական աջակցություն

Ուսումնական հաստատության, նրա մեթոդական միավորումների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին մշտապես ցուցաբերվել է գործնական օգնություն ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում:

Սովորողների ընդհանուր, ինչպես նաև գեղագիտական դաստիարակության, նրանց մոտ ճիշտ արժեհամակարգի և դիրքորոշման ձևավորման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման նպատակով իրականացվել են տարբեր արտադպրոցական և ներդպրոցական միջոցառումներ: ՄԿԱԳ-ի և դասղեկների կողմից պարբերաբար կատարվել են դասալսումներ դաստիարակչական կողմը գնահատելու նպատակով: Ինչպես նաև, ուսուցիչներին ցուցաբերվել է աջակցություն միջոցառումներ կազմակերպելու ու անցկացնելու ընթացքում և սովորողների վարքագծի հետ կապված:

Աշխատանք է տարվել սովորողների վարքագծի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման, դպրոցական ինքնավարության և հասարակական վերահսկողության ուղղությամբ: Հսկողություն է իրականացվել

ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ: Հստակ կազմավորվել և գործել են Աշակերտական խորհուրդը, Ծնողական խորհուրդը, հաստատվել է կառուցողական համագործակցություն այդ խորհրդակցական մարմինների հետ, որոնք ծառայել են սովորողների շահերին: Առողջ համագործակցություն է իրականացվել նաև համայնքի այլ հաստատությունների հետ, ինչպես նաև համագործակցության պայմանագիր է կնքվել ՌԴ ք. Սոլնեչնոգորսկի Ալ. Բլոկի անվան հ. 1 ճեմարանի և Սլովակիայի ք. Բրատիսլավայի Ա. Էյնշտեյնի անվան վարժարանի հետ:

Ստորև աղյուսակի տեսքով առավել մանրամասն ներկայացված են 2022-2023 ուստարվա ընթացքում կազմակերպված տարատեսակ ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումները:

| **Ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներ** | | | |
|---|---|---|---|
| 1. | «Ապրի'ր հավերժ, ի՛մ Հայաստան» խորագրով ֆլեշմոբ՝ նվիրված Հայաստանի անկախությանը | ՄԿԱԳ, դասվարներ | սեպտեմբեր |
| 2. | «Ինքնաճանաչում. Էրեբունի» նկարչական մրցույթ, «Էրեբունի-Երևան» տոնին նվիրված ցուցահանդես | ՄԿԱԳ, կերպարվեստի ուսուցչուհի Է. Դարբինյան | սեպտեմբեր հոկտեմբեր |
| 3. | «Ա» տառի շնորհանդես՝ առաջին դասարաններ | ՄԿԱԳ, դասվարներ Ն. Հունանյան, Ա. Խաչատրյան | հոկտեմբեր |
| 4. | «Ինչպե՞ս տեսնել երաժշտությունը» դաս-երկխոսություն | ՄԿԱԳ, Ազգային երգ ու պարի ուսուցչուհի Պ. Եթարյան | հոկտեմբեր |
| 5. | «Արի՛ Երևան» խորագրով խաղ-վիկտորինա | ՄԿԱԳ, պատմության ուսուցչուհի Հ. Ղևոնդյան | հոկտեմբեր |
| 6. | «Իմ սիրելի Այբբենարան, ամենաթանկ իմ գանձարան» խորագրով ցերեկույթ | ՄԿԱԳ, դասվարներ Ն. Հունանյան, Ա. Խաչատրյան | հունիս |
| 7. | «Ոսկեզօծ աշուն» խորագրով նկարչական մրցույթ | ՄԿԱԳ, դասղեկներ | նոյեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| 8. | «Իմ իրավունքներն իմ աչքերով» խորագրով ինտերակտիվ միջոցառում | Համարակագիտության ուսուցչուհի Լ. Գևորգյան և տնօրենի տեղակալ Ա. Աղաջանյան | նոյեմբեր |
| 9. | Մրցույթ ,,Русская школа за рубежом” учитель-международник խորագրով | ՄԿԱԳ, ռուսերենով ուսուցմամբ դասվար Գ. Գասպարյան | նոյեմբեր |
| 10. | «Էկո բնակարան» նախագծային աշխատանք | Կենսաբանության և քիմիայի ուսուցչուհի Ի. Ծատուրյան | դեկտեմբեր |
| 11. | Թումանյանական շաբաթ՝ թումանյանական անկյուն | ՄԿԱԳ, դասվարներ, կերպարվեստի ուսուցչուհի Է. Դարբինյան | փետրվար |
| 12. | «Մի կաթիլ մեղրը» հեքիաթի բեմականացում տարրական դպրոցի ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների մասնակցությամբ | ՄԿԱԳ, ռուսերենով ուսուցմամբ դասվարներ Գ. Գասպարյան և Գ. Մանասյան | փետրվար |
| 13. | Աշխարհն ու մարդուն ճանաչելու համար «Ճամփա ենք ընկել...» խորագրով դաս-միջոցառում՝ նվիրված հանճարեղ լոռեցուն՝ Հովհաննես Թումանյանին | ՄԿԱԳ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ն. Հաբեթյան | փետրվար |
| 14. | Մայրենիի միջազգային օրվան նվիրված միջոցառումներ. ԿԳՄՍՆ-ի կողմից կազմակերպված ֆլեշմոբ՝ #խոսումենքբարբառով խորագրով | ՄԿԱԳ, պատմաբանասիրական մասնախմբի ուսուցիչներ | փետրվար |
| 15. | Մայրենիի նախընթաց շաբաթվա ընթացքում ԿԳՄՍՆ-ի սոցիալական հարթակներում իրականացված սոցիալական արշավ՝ #խոսումենքհայերեն | Տնօրեն, ուսումնական գծով տնօրենի տեղակալ, ՄԿԱԳ, ուսուցիչներ | փետրվար |

| | | | |
|---|---|---|---|
| 16. | «Շնորհավոր Բարեկենդան, սիրով հասնենք Սուրբ Հարության» խորագրով շրջիկ-միջոցառում | ՄԿԱԳ, պատմության ուսուցչուհի Տ. Պետրոսյան | փետրվար |
| 17. | Սուրբ Վալենտինի օրվան նվիրված մրցույթ 8-րդ դասարանի սովորողների մասնակցությամբ | Անգլերենի ուսուցչուհի Հ. Գրիգորյան | փետրվար |
| 18. | Շախմատի 17-րդ մրցույթի ներդպրոցական փուլ | ՄԿԱԳ, շախմատի ուսուցիչ Մ. Ղազինյան | փետրվար |
| 19. | «Դռները բացեք, գարուն է գալիս» խորագրով միջոցառում | ՄԿԱԳ, դասվար Ն. Հունանյան | մարտ |
| 20. | Մարտի 1-ին քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով ցուցադրական հատուկ միջոցառում | ՄԿԱԳ, զինղեկ Ռ. Թունյան | մարտ |
| 21. | «Կոմիտաս՝ հայ մեծանուն կոմպոզիտոր» խորագրով միջոցառում | ՄԿԱԳ, ազգային երգ ու պարի ուսուցչուհի Ջ. Դովլաթյան | ապրիլ |
| 22. | Սուրբ Զատիկ | ՄԿԱԳ, դասվարներ | ապրիլ |
| 23. | ,,Теремок” հեքիաթի բեմականացում | ՄԿԱԳ, ռուսաց լեզվի ուսուցչուհի Թ. Բարսեղյան | ապրիլ |
| 24. | Գրքի քննարկում. «Փոքրիկ իշխան» Ա. Էքզյուպերի | Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ն.Հաբեթյան | փետրվար |
| 25. | Մայրենի լեզվի տոնին ընդառաջ կազմակերպված սոցիալական արշավ #եսընտրումեմհայերենը# խորագրով հոլովակ | Տնօրեն, ՄԿԱԳ, սովորողներ | փետրվար |
| 26. | Նախագծային աշխատանք «Ժողովրդական բանահյուսություն» | ՄԿԱԳ, ռուսերենով ուսուցմամբ դասվարներ Գ. | մարտ |

| | | | |
|---|---|---|---|
| | | Գասպարյան և Գ. Մանասյան | |
| 27. | Դպրոցական երկլեզու կայքի ստեղծում | Տնօրեն, ՄԿԱԳ, 9-րդ դասարանի սովորողներ Էդուարդ Խաչատրյան, Նորայր Այաազյան, Յուրի Կարապետյան | մարտ |
| 28. | Ջրի միջազգային օրվան նվիրված միջոցառում | Քիմիայի ուսուցիչներ Հ. Առաքելյան և Ի. Ծատուրյան | ապրիլ |
| 29. | «Նորից երգում ու մրմռքում է Կոմիտասը» խորագրով հետազոտական աշխատանք | ՄԿԱԳ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ն.Հաբեթյան | մայիս |

## 2022-2023 ուստարվա ընթացքում աշակերտական խորհուրդի (ԱԽ) հետ կատարված աշխատանքներ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Սեպտեմբերի 1՝ Գիտելիքի և դպրության օր | ՄԿԱԳ, ԱԽ | սեպտեմբեր |
| 2. | ԱԽ-ի ձևավորում 6-9-րդ դասարանցիների մասնակցությամբ | ՄԿԱԳ, դասղեկներ | սեպտեմբեր |
| 3. | ԱԽ նիստ՝ նախագահի ընտրության նպատակով<br>Նախագահ՝ 9-րդ դասարանի սովորող Ալինա Կոչերգինա | ՄԿԱԳ, ԱԽ | սեպտեմբեր |
| 4. | «Ապրի'ր հավերժ, ի՛մ Հայաստան» խորագրով ֆլեշմոբ | ՄԿԱԳ, ԱԽ | սեպտեմբեր |
| 5. | ԱԽ նիստեր | ՄԿԱԳ, ԱԽ | ամեն ամիս |
| 6. | Անակնկալ ուսուցիչներին «Ուսուցչի օրվա» կապակցությամբ | ՄԿԱԳ, ԱԽ | հոկտեմբեր |
| 7. | ԱԽ արտահերթ նիստ՝ նվիրված 44-օրյա պատերազմի հերոսներին «Բարձունքը մերն է, տղերքը չկան» խորագրով | ՄԿԱԳ, ԱԽ | նոյեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Սոլնեչնոգորսկ քաղաքի Ալ. Բլոկի անվան հ.1 ճեմարանի և մեր դպրոցի ԱԽ անդամների հանդիպում | ՄԿԱԳ, ԱԽ | պարբերաբար |
| 9. | Կրեատիվ տոնածառների ցուցահանդես | ՄԿԱԳ, ԱԽ | դեկտեմբեր |
| 10. | «Փոքրիկ քաղաքացի» ամսագրի ստեղծում, որը ներկայացնում է դպրոցական կյանքն ու առօրյան | ՄԿԱԳ, ԱԽ | հունվար |
| 11. | Վիդեո-կոնֆերանսներ քույր-դպրոցներ ՌԴ ք. Սոլնեչնեգորսկի Ալ. Բլոկի անվան հ. 1 ճեմարանի և Սլովակիայի ք. Բրատիսլավայում գտնվող Ա. Էնշտեյնի անվան վարժարանի հետ | Տնօրեն, ՄԿԱԳ, ԱԽ | պարբերաբար |

## Համագործակցություն ծնողական խորհրդի (ԾԽ) և առհասարակ ծնողական համայնքի հետ

2022-2023 ուստարվա կարևոր ձեռքբերումներից էր նաև առողջ, կառուցողական և ակտիվ համագործակցությունը ԾԽ-ի և առհասարակ ծնողական համայնքի հետ: Ծնողական ժողովներ են հրավիրվել առնվազն 4 անգամ, իսկ խնդրահարույց դասարանների հետ՝ նույնիսկ ավելի շատ: Հակասոցիալական վարք ունեցող սովորողների ծնողների հետ տարվել են անհատական հանդիպումներ և զրույց-քննարկումներ: Բոլոր ձևաչափերով կազմակերպված ժողովներին ներկա է գտնվել ողջ վարչակազմը, դասղեկը, հոգեբանը և սոցիալական մանկավարժը, երբեմն նաև դպրոցի՝ անչափահասների գործերով տեսուչը:

Ստորև մանրամասն ներկայացված է ծնողական համայնքի հետ տարված համագործակցությունը:

| | | | |
|---|---|---|---|
| 1. | ԾԽ-ի ձևավորում | ՄԿԱԳ, ծնողներ | սեպտեմբեր |
| 2. | ԾԽ նիստ՝ նախագահի ընտրության նպատակով: Նախագահ՝ Մանուշ Միրզոյան | ՄԿԱԳ, ծնողներ | սեպտեմբեր |
| 3. | ԾԽ նիստեր | ՄԿԱԳ, ծնողներ | պարբերաբար |
| 4. | «Իմ երեխան դեռահաս է», «Բուլլինգը դեռահասների միջավայրում» թեմաների շուրջ զրույց-քննարկում ԾԽ-ի մասնակցությամբ | Տնօրեն, ՄԿԱԳ, ուսմասվար, հոգեբան, սոց. Մանկավարժ, ծնողներ | դեկտեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| 5. | Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ ԾԽ-ի կողմից ռուսական դասագրքերի նվիրաբերություն գրադարանին | ՄԿԱԳ, ԾԽ | փետրվար |
| 6. | Ծնողական ժողովներ | Վարչակազմ, դասղեկներ, ծնողներ, հոգեբան, սոց. մանկավարժ | պարբերաբար |
| 7. | «Դասը վարում է ծնողը» խորագրով դաս-սեմինարներ՝ «Իմացիր քո իրավունքները և պարտականությունները», «Ինչպես պաշտպանվել երկրաշարժից», «Արդարությունը՝ որպես բարոյական, իսկ արդարադատությունը՝ որպես իրավական կատեգորիաներ» | ՄԿԱԳ, ծնողներ Կ. Բաղդասարյան, Տ. Հայրապետյան, Հ. Օհնիկյան | դեկտեմբեր<br>փետրվար |
| 8. | «Բանակի օրվա» կապակցությամբ ծանրոցներ Վարդենիսի ծառայողական կետ | Ողջ ծնողական համայնք, սովորողներ | հունվար |

## Համագործակցություն պետական հասարակական կառույցների հետ

| Ոստիկանության՝ անչափահասների գործերով աշխատակից | | | |
|---|---|---|---|
| 1. | Հանդիպումներ հակասոցիալական վարք և դժվար դաստիարակվող սովորողների ու նրանց ծնողների հետ | ՄԿԱԳ, տեսուչներ, սովորողներ, ծնողներ | պարբերաբար |
| **ԱԻՆ** | | | |
| 2. | Հանդիպումների, տարհանումների պլանային միջոցառումների իրականացում | Տնօրենություն, դասղեկներ ծնողներ | պարբերաբար |
| 3. | «Օդային տագնապ» ուսումնական տարհանում 1-9 -րդ դասարանի սովորողների և ողջ անձնակազմի մասնակցությամբ: | Տնօրենություն, զինղեկ, սովորողներ, ուսուցիչներ, բուժքույր | սեպտեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| 4. | Քաղպաշտպանության օրվան նվիրված վարժանք-տարհանում | Տնօրենություն, զինղեկ, սովորողներ, ուսուցիչներ, բուժքույր | մարտ |
| 5. | Զրույց-սեմինարներ ուսուցիչների և սովորողների հետ | Տնօրենություն, զինղեկ, սեյսմիկ կենտրոնի աշխատակիցներ | դեկտեմբեր |

## Համագործակցություն ՀՀ ԿԳՄՍՆ-ի ԿԶՆԱԿ հիմնադրամի հետ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | «Միջմշակութային հաղորդակցում, տարբեր մշակույթների և ժառանգությունների արժևորում», «Գաղափարների տոնավաճառ» նախագծային միջոցառումներ | ՄԿԱԳ, աշխարհագրությա ն ուսուցչուհի Ս. Կոսյան, սովորողներ | սեպտեմբեր |
| 2. | «Մեդիագրագիտությունը սովորողների աչքերով»՝ «Մեդիասպառող, թե՞ մեդիաստեղծող» մեդիագրագիտության նախագծի շրջանակներում | ՄԿԱԳ, ինֆորմատիկայի ուսուցչուհի Ն. Խնկիկյան | նոյեմբեր |
| 3. | «Ես եմ ռեժիսորը» ֆիլմաստեղծման հանրապետական դպրոցական նախագիծ | Տնօրենություն, սովորողներ, դասղեկներ | |
| 4. | Հարմարվողականության ազգային ծրագիր» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի շրջանակներում «Դիմակայենք կլիմայի փոփոխությանը» խորագրով միջոցառում | ՄԿԱԳ, աշխարհ. ուսուցչուհի Ս. Կոսյան, սովորողներ | դեկտեմբեր |
| 5. | «Էկոհատիկներ» խորագրով հետազոտական աշխատանք «Աջափնյակ» վարչական շրջանի թիվ 42 մանկապարտեզի սաների հետ | Տնօրենություն, աշխարհ. ուսուցչուհի Մ. Նալբանդյան | մարտ |
| 6. | Generation Global-ի կողմից կազմակերպված WHAT IS WELL-BEING խորագրով Photo Contest | Տնօրեն, անգլերենի ուսուցչուհի Ա.Սիմոնյան | |

| | | | |
|---|---|---|---|
| 7. | «Հայ երգը կինոյում» համապետական նախախագիծ | Տնօրենություն, 8-րդ դասարանի սովորողներ | մայիս |
| 8. | «Մոլորակն ունի իմ և քո օգնության կարիքը» համապետական աշակերտական բնապահպանական նախագիծ | ՄԿԱԳ, աշխարհ. ուսուցչուհի Ս. Կոյան, սովորողներ | |
| 9. | «Հետազոտենք և բացահայտենք աշխարհը» աշակերտական աշխատաժողով | ՄԿԱԳ, աշխարհ. ուսուցչուհի Ս. Կոյան, սովորողներ | մայիս |
| | **<u>Համագործակցություն Ռուսական գրքի տան հետ</u>** | | |
| 1. | «Ռուսական գրքի» տանը կազմակերպված միջոցառում-ծանոթացում | Տնօրեն, ՄԿԱԳ, ռուսաց լեզվի ուսուցչուհի Կ. Զաքարան, սովորողներ | սեպտեմբեր |
| 2. | „Шахматово-обитель любви” խորագրով գրական-երաժշտական միջոցառում՝ նվիրված ռուս գրող Ալ. Բլոկի 142-ամյակին | ՄԿԱԳ, ռուսաց լեզվի ուսուցչուհի Կ. Զաքարան, 8դ դասարանի սովորողներ | դեկտեմբեր |
| 3. | Ռեժիսոր Ա. Ավդալյանի «Հայոց թագուհիներ» ֆիլմի ավանդական կինոդիտում | ՄԿԱԳ, աշխարհ. ուսուցչուհի Ս. Կոյան | ապրիլ |
| | **<u>«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան</u>** | | |
| 1. | «Ինքնաճանաչում. Էրեբունի» նկարչական մրցույթ | ՄԿԱԳ, դասղեկներ, 5-7-րդ դասարանների սովորողներ, | սեպտեմբեր |

<table>
<tr><td></td><td></td><td>կերպարվեստի ուսուցիչ Է. Դարբինյան</td><td></td></tr>
<tr><td colspan="4"><u>ԱՅԲ Կրթական հիմնադրամ</u></td></tr>
<tr><td>1.</td><td>«Այբ» կրթահամալիրում կազմակերպված «Գիտության փառատոն» համադպրոցական գիտաժողով</td><td>Ուսմասվար Ա. Աղաջանյան, Ֆիզիկայի ուսուցչուհի Ֆ. Մկոյան</td><td>նոյեմբեր</td></tr>
<tr><td colspan="4"><u>Ռուսական տուն Երևանում</u></td></tr>
<tr><td colspan="2">1. Ստալինգրադի ճակատամարտի 80-ամյակին և շրջափակումից Լենինգրադի ամբողջական ազատագրման 79-ամյակին նվիրված ընթացիկ ցուցահանդես</td><td>Տնօրենություն, ռուսերենի ուսուցիչներ Կ. Զաքարյան, Ա. Գալստյան</td><td>հունվար</td></tr>
<tr><td colspan="2">2. «Թումանյանը որպես ակտիվ քաղաքացի» միջդպրոցական հետազոտական նախագիծ</td><td>Տնօրեն, ՄԿԱԳ, հայոց լեզվի ուսուցչուհի Դ. Կարապետյան, ռուսաց լեզվի ուսուցչուհի Կ. Զաքարյան, 9-րդ դասարանի սովորող Միլենա Գրիգորյան</td><td>փետրվար</td></tr>
<tr><td colspan="2">3. ,,Масленица” տոնակատարություն</td><td>Ռուսաց լեզվի ուսուցչուհի Ա. Գալստյան և սովորողներ</td><td>փետրվար</td></tr>
<tr><td colspan="2">4. ,,Живая классика-2023” միջազգային մրցույթ</td><td>ՄԿԱԳ, ռուսաց լեզվի ուսուցչուհի Կ. Զաքարյան, 8-րդ դասարանի սովորող Վահե Սուքյասյան</td><td>մարտ</td></tr>
<tr><td colspan="2">5. ,,Устное народное творчество” խորագրով ինտերակտիվ միջոցառում 6 դպրոցների մասնակցությամբ</td><td>ՄԿԱԳ, ռուսերենով ուսուցմամբ դասվարներ Գ. Գասպարյան և Գ. Մանասյան</td><td>մայիս</td></tr>
<tr><td colspan="4"><u>Հովհաննես Թումանյանի  տուն-թանգարան</u></td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| 1. Թումանյանական օլիմպիադա | ՄԿԱԳ, Պատմաբանասիրական մեթոդական միավորման ղեկավար Հ. Ղևոնդյան, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Դ. Կարապետյան, սովորողներ | մարտ |
| **<u>Մոսկվայի տուն</u>** | | |
| 1. Հանդիպում գրող, նկարչուհի Մ. Պետրոսյանի հետ | ՄԿԱԳ, ռուսաց լեզվի մեթոդական միավորման անդամներ | մարտ |
| 2. Ալեքսանդր Օղջոյի առցանց դասախոսություն՝ նվիրված Ստալինգրադյան պատերազմում հաղթանակի 80-ամյակին | ՄԿԱԳ, ֆիզկուլտուրայի ուսուցչուհի Ա. Հայրապետյան, սովորողներ | մայիս |
| **<u>Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց</u>**<br>**<u>և</u>**<br>**<u>Պ. Ցավրովի անվան հ.131 հիմնական դպրոց</u>** | | |
| 1. «Երեխաները երեխաներին» նախագիծ | Դասվար Գ. Գասպարյան, 3գ դասարանի սովորողներ, հ.131 դպրոցի դասվարներ Ա. Պետրոսյան և Լ. Պիվազյան | մայիս |
| 2. «Ես բնագետ եմ» աշակերտական գիտաժողով | Տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ Ա. Աղաջանյան, ֆիզիկայի ուսուցչուհի Ֆ. Մկոյան քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի Ի. Ծատուրյան, քիմիայի ուսուցչուհի Հ. Առաքելյան | Մայիս |

| | | |
|---|---|---|
| **<u>Քույր-դպրոցներ</u>** | | |
| 1. Համագործակցության պայմանագիր ՌԴ Մոսկվայի շրջանի ք. Սոլնեչնոգորսկի Ալ. Բլոկի անվան հ. 1 ճեմարանի հետ | Տնօրեն Կ.Մխիթարյան, ՌԴ ք. Սոլնեչնոգորսկի Ալ. Բլոկի անվան հ.1 ճեմարանի տնօրեն Օ. Սմիրնովա | հոկտեմբեր |

| | | |
|---|---|---|
| 2. Համագործակցության պայմանագիր Սլովակիայի Բրատիսլավա քաղաքում գտնվող Ա. Էյնշտեյնի անվան վարժարանի հետ | Տնօրեն Կ.Մխիթարյան, Սլովակիայի ք. Բրատիսլավայի Ա. Էնշտեյնի անվան վարժարանի տնօրեն Մ. Կոլկովա | հունվար |
| 3. Գրքի օրվա կապակցությամբ ռուսական դասագրքերի բարեգործական նվիրատվություն քույր-դպրոց ք. Սոլնեչնոգորսկի Ալ. Բլոկի անվան հ. 1 ճեմարանի կողմից՝ թվով 230 դասագիրք | Տնօրեն Կ.Մխիթարյան, ՌԴ ք. Սոլնեչնոգորսկի Ալ. Բլոկի անվան հ.1 ճեմարանի տնօրեն Օ. Սմիրնովա | փետրվար |
| 4. „Телемост дружбы и мира” | Տնօրեն Կ. Մխիթարյան, ՄԿԱԳ, սովորողներ, ՌԴ ք. Սոլնեչնոգորսկի Ալ. Բլոկի անվան հ.1 ճեմարանի տնօրեն Օ. Սմիրնովա, ՄԿԱԳ, սովորողներ, Սլովակիայի ք. Բրատիսլավայի Ա. Էյնշտեյնի անվան վարժարանի տնօրեն Մ. Կոլկովա, ռուսերենի մասնախմբի ղեկավար Մ. Զվերեվա | մայիս |

## Ավ. Իսահակյանի անվան գրադարանի Լ. Մոտալովայի անվան թիվ 33 մասնաճյուղ

| | | |
|---|---|---|
| 1. 5ա դասարանի սովորող Նինել Դավոյանը՝ 2022թ. լավագույն ընթերցող | Տնօրեն, ՄԿԱԳ | մարտ |
| **Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ** | | |
| 1. Հայոց բանակի օրվան ընդառաջ կազմակերպված ինտերակտիվ միջոցառում | ՄԿԱԳ, 8-9-րդ դասարանի սովորողներ | հունվար |
| 2. «Ձեռագրերի միջազգային օրը» խորագրով միջոցառում | ՄԿԱԳ, 5-6 րդ դասարանների դասղեկներ, ռովորողներ | հունվար |

| | | |
|---|---|---|
| 3. Հեքիաթների ընթերցում՝ կարդում են դերասանները | Դասվարներ, 1-4-րդ դասարանի սովորողներ | |
| **Հայաստանի Ազգային Գրադարան** | | |
| 1. Ազգային գրադարանի կազմակերպած «Գրական հյուրասրահ» Մոսկվայի Ռուդոմինոյի անվան արտասահմանյան գրականության համառուսաստանյան գրադարանի հետ առցանց հանդիպում | ՄԿԱԳ, ռուսերենի ուսուցիչներ Ա. Գալստյան, Կ. Զաքարյան | նոյեմբեր |
| **Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան և Ա. Ի. Հերցենի անվան ռուսական պետական մանկավարժական համալսարան** | | |
| 1. Գիտական և վերլուծական հետազոտություն ու թեստավորում՝ ТРКИ- II (B2) և ТРКИ- II (C1) մակարդակի հավաստագրերի շնորհում | 9-րդ դասարանի սովորողներ և ռուսերենով ուսուցմամբ դասարաններում դասավանդող ուսուցիչներ | դեկտեմբեր |

## Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Այց Կենտրոնական բանկ (9-րդ դասարանների սովորողները) | ՄԿԱԳ, դասղեկներ, սովորողներ | սեպտեմբեր |
| 2. | Կրթություն և կարիերա EXPO-2022 | ՄԿԱԳ, ուսուցիչներ, սովորողներ | սեպտեմբեր |
| 3. | Այց Հայ-Սլավոնական համալսարան (РАУ) 9-րդ դասարանների սովորողների հետ | ՄԿԱԳ, ուսուցիչներ, սովորողներ | հոկտեմբեր |
| 4. | ԵՊՀ-ում կազմակերպված «BioExpo» ցուցահանդես | ՄԿԱԳ, բնագիտական մասնախմբի ուսուցիչներ, սովորողներ | հոկտեմբեր |
| 5. | Հանդիպում Հայաստանի բանկերի միության տնօրեն Սեյրան | ՄԿԱԳ, դասղեկներ, սովորողներ | նոյեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| | Սարգսյանի և տնօրենի տեղակալ Արման Սարգսյանի հետ | | |
| 6. | Այց Սահմանադրական դատարան, հանդիպում նախագահ Ա. Դիլանյանի հետ | ՄԿԱԳ, հասարակագիտության ուսուցչուհի Լ.Գևորգյան | մարտ |
| 7. | Այց փաստաբանների պալատ | ՄԿԱԳ, ԾԽ անդամ Կարինե Բաղդասարյան, սովորողներ | մարտ |
| 8. | Այց Երևանի N 6 արհեստագործական պետական ուսումնարան | ՄԿԱԳ, դասղեկներ, սովորողներ | ապրիլ |
| 9. | Եվրասիա համալսարանում կազմակերպված վարպետության դասեր՝ «Ինչպե՞ս գրել «հաղթող» CV և գրագետ ներկայանալ հարցազրույցներին», «Կրթության խաղարկայանացում», «Ինչպե՞ս գրոյից ստեղծել տուրիստական ընկերություն», «Նոր թվային ապագա՝ ինչպես չկործանվել և լինել հաջողակ» | ՄԿԱԳ, դասղեկներ, սովորողներ | ապրիլ |
| 10. | Այց Պլեխանովի անվան տնտեսագիտական համալսարան | ՄԿԱԳ, դասղեկներ, սովորողներ | ապրիլ |
| 11. | Առողջ ապրելակերպի վերաբերյալ սեմինար «Վնասակար սովորույթներին ասել՝ ո'չ» խորագրով | ՄԿԱԳ, Առողջ ապրելակերպի մասնագետ-սննդաբան Լիլիթ Գևորգյան | ապրիլ |
| 12. | «Քո արվեստը դպրոցում» ծրագրի շրջանակներում հանդիպում-քննարկում-շրջայց Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում | ՄԿԱԳ, սոց. մանկավարժ Մ. Գևորգյան, սովորողներ | նոյեմբեր |
| 13. | Համադպրոցական արշավ դեպի Ծաղկեվանք | ՄԿԱԳ, տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ Ա. Աղաջանյան | նոյեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| 14. | Հանդիպում երաժշտագետ Լիլիթ Մարտիրոսյանի հետ «Առնո Բաբաջանյան» համերգասրահի ներքնահարկում՝ «Դպրոցականի ֆիլհարմոնիա» կրթամշակութային ծրագրի շրջանակներում | ՄԿԱԳ, ազգային երգ ու պարի ուսուցչուհի Զ. Դովլաթյան | նոյեմբեր |
| 15. | «Ցեղասպանությունը 100 տարի առաջ և հիմա» թեմայով զրույց-քննարկում՝ ԳԱԱ Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Արմեն Մարուքյանի հրավերով | ՄԿԱԳ, հասարակագիտության ուսուցիչ, Լ. Գևորգյան | ապրիլ |
| 16. | «Հնարավորությունների հարթակ» V աշակերտական գիտահետազոտական գիտաժողով | ՄԿԱԳ, դասղեկներ, սովորողներ | մայիս |
| 17. | Մասնակցություն մանկավարժական մտքի փառատոնին | Հասարակագիտության ուսուցիչ Լ. Գևորգյան, տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ Ա. Աղաջանյան, սովորողներ | հունիս |

Դպրոցի 1-8-րդ դասարանների սովորողներն օգտվել են «Դպրոցական բաժանորդային համակարգի ներդրում» ծրագրից, հաճախել են տարբեր թանգարաններ (Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, Ե. Քոչարի, Ա. Իսահակյանի, Հ. Թումանյանի, Մ. Սարյանի և այլն), թատրոններ (Կ. Ստանիսլավսկու անվան, Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոն, Ա. Սպենդիարյանի անվան Օպերայի և բալետի ակադեմիական թատրոն)։

## <u>Այլ ներդպրոցական միջոցառումներ</u>

Կազմակերպվել են տարբեր միջոցառումներ ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ։

| | | | |
|---|---|---|---|
| 1. | «Գիտելիքի, գրի և դպրության» օրվան նվիրված միջոցառում | ՄԿԱԳ, դասղեկներ | սեպտեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| 2. | Թարգմանչաց տոն | ՄԿԱԳ, կերպարվեստի ուսուցչուհի Է. Դարբինյան | հոկտեմբեր |
| 3. | «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը նվիրված ցուցահանդես | Կերպարվեստի ուսուցչուհի Է. Դարբինյան, սովորողներ | հոկտեմբեր |
| 4. | «Ոսկե աշուն» առցանց նկարչական մրցույթ | ՄԿԱԳ, տարրական դպրոցի դասվարներ, սովորողներ | նոյեմբեր |
| 5. | Թումանյանական օրեր, Գիրք նվիրելու օրվան, Մայրենիի միջազգային օրվան նվիրված միջոցառումների 2-9 դասարաններում | | փետրվար |
| 6. | Քաղաքացիական պաշտպանության համաշխարհային օրվա կապակցությամբ դաս-սեմինարներ | ՄԿԱԳ, զինղեկ փոխգնդապետ Ռ. Թունյան և բուժքույր Լ. Մելոյան | Մարտ |
| 7. | Շախմատի 17-րդ ներդպրոցական մրցույթ | ՄԿԱԳ, շախմատի ուսուցիչ Մ. Ղազինյան | մարտ |
| 8. | Մեդիագրագիտության շրջանակներում «Լիտերատուսի արկածները» խաղ | Հասարակագիտության ուսուցիչ Լ. Գևորգյան, սովորողներ | պարբերաբար |
| 9. | Անտառների միջազգային օրվան, Ջրի միջազգային օրերին նվիրված միջոցառումներ | Ս. Կոսյան, Ի. Ծատուրյան, Հ. Առաքելյան | |
| 10. | | | |

## Բազմամասնագիտական խմբի կատարած աշխատանքներ

Դպրոցում առանձնահատուկ կարևոր դերակատարում ունի բազմամասնագիտական թիմը, որի կազմի մեջ են մտնում հատուկ մանկավարժը, սոցիալական մանկավարժը, հոգեբանը, լոգոպեդը և ուսուցչի օգնականները: Ավելորդ է նշել, թե որքան անհրաժեշտ է այս մասնագետների աջակցությունը սովորողների դեռահասության և նախադեռահասության տարիքին բնորոշ հոգեբանական և սոցիալական խնդիրներ հաղթահարելիս, սեփական ես-ը ձևավորելիս, միջանձնային և ներանձնային խնդիրներ կարգավորելիս, ինչպես նաև լեզվական խնդիրներ լուծելիս:

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել է համընդհանուր ներառական ուսուցում կազմված ԱՈՒՊ-ներին համապատասխան: Թիմը աշխատել է նախապես կազմված դասացուցակին համապատասխան՝ անհատական աշխատանքներ իրականացնելով սովորողների հետ: Դասապրոցեսի ընթացքում եղել է աջակցություն ուսուցչին, նախապես գրված պլանին համապատասխան: Աջակցությունը եղել է կարիքից ելնելով և համագործակցելով ծնողների հետ, լսելով նրանց մտահոգությունները և առաջարկությունները: Ուստարվա ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ դասավանդող ուսուցիչների և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողների հետ՝ նախապես կազմված ժամանակացույցին համապատասխան և կազմվել արձանագրություններ: Ուսումնական տարվա սկզբին եղել են թվով 13 սովորողներ, տարվա ավարտին՝ 19:

2022-2023 ուստարվա ընթացքում կատարվել են դիտարկումներ ուսումնական դժվարություններ ունեցող սովորողներին ճանաչելու, նախնական տեղեկություններ հավաքելու նպատակով: Ուսուցիչներին ցուցաբերվել է աջակցություն սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորման և իրականացման, ինչպես նաև ԱՈՒՊ-ների մշակման և վարման գործընթացներում: ԲՄԹ խմբի անդամները նաև ակտիվ աջակցություն են ցուցաբերել դժվար դաստիարակվող սովորողների հետ տարվող աշխատանքներին՝ ներկա գտնվելով համապատասխան դասերին, դիտարկելով նրանց վարքագիծը և զրուցելով ծնողների հետ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի շուրջ:

ԲՄԹ խմբի անդամները նաև ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ԿԱՊԿ ունեցող սովորողների կարիքի գնահատման, նրանց համար անհրաժեշտ ուսումնական նյութերի պատրաստման գործում, դասավանդող ուսուցիչների հետ քննարկել յուրաքանչյուր սովորողի ուսումնառության հետ կապված խնդիրները:

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել է սեմինար, որի նպատակն էր ուսուցիչներին ծանոթացնել ԱՈՒՊ-ների վարման նոր կարգին: Իրականացվել է նաև ամենամսյա հանդիպումներ թիվ 2 ՏՄԱԿ-ից գործուղված մասնագետների հետ փորձի փոխանակման և մասնագիտական քննարկումների նպատակով: Յուրաքանչյուր ամիս

հանդիպում է կազմակերպվել նաև ԿԱՊԿՈՒ սովորողների ծնողների և տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի մասնակցությամբ:

Սոցիալական մանկավարժը կազմակերպել է զրույց-քննարկումներ սովորողների հետ «Ընկերասիրություն» և «Հիգիենայի կանոններ» թեմայով: Ուսումնական ընթացքում նաև կատարվել են դասալսումներ, որոնց նպատակն է եղել պարզել սովորողների ուսումնական գործունեության և նրանց հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը:

Լոգոպեդի կողմից աջակցություն է ցուցաբերվել ներառական համակարգում ընդգրկված սովորողների, որոնք ունեն հնչարտաբերության խանգարումներ, ընթերցանության, բանավոր և գրավոր կապակցված խոսքի խանգարումներ, ինչպես նաև խոսքի ընդհանուր թերզարգացում: Լոգոպեդական աջակցություն են ստացել նաև այլ սովորողներ, ովքեր ընդգրկված չեն ներառական համակարգում: Մասնավորապես՝ իրականացվել են լոգոպեդական աշխատանքներ՝ ուղղված արտաբերական ապարատի, ձայնային և շնչառական ապարատի մարզմանը, հնչարտաբերության շտկմանը, հնչութային ընկալման զարգացմանը, ինչպես նաև կապակցված խոսքի և գրավոր խոսքի զարգացում:

Դպրոցի ուսուցիչների և ծնողների հետ ևս իրականացվել են լոգոպեդական զրույց-խորհրդատվություններ:

Առանձնահատուկ կարևոր դերակատարում է ունեցել նաև հոգեբանը, ով ուսումնական տարվա սկզբին ուսումնասիրել էր ԿԱՊԿՈՒ սովորողների անձնական գործերը և առանձնացրել հոգեբանական աջակցության կարիք ունեցողներին հետագայում աշխատելու համար: Պարբերաբար տեղի են ունեցել հանդիպումներ ԿԱՊԿՈՒ սովորողների ծնողների հետ, որի ժամանակ քննարկվել են բազմաթիվ հուզող հարցեր: Հոբեգանը շատ ակտիվ աշխատել է նաև դպրոցի այլ սովորողների հետ, ովքեր ներառված չեն՝ օգնելով նրանց հաղթահարել տարիքային առանձնահատկությունների հետ կապված շատ խնդիրներ:

ԲՄԹ-ն ակտիվ համագործակցել է նաև Թիվ 2 ՏՄԱԿԻ-ից գործուղված մասնագետների հետ՝ դիտարկելով և բացահայտելով ուսումնառության ընթացքում սովորողների մոտ ի հայտ եկած դժվարությունները: Հաճախ նաև հոգեբանական աջակցության կարիք ունցող սովորողների հետ տարվել են անհատական հանդիպումներ և առարկայական աջակցություն:

ԲՄԹ-ն մշտապես հարգել և պաշտպանել է բոլոր սովորողներիի իրավունքներն ու ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը և փորձել այդ դիրքորոշումը սերմանել նաև բոլոր սովորողների, հատկապես՝ հակասոցիալական վարք ունեցող սովորողների մեջ:

Իրականացվել են անհատական և խմբային պարապմունքներ՝ ԿԱՊԿՈՒ սովորողների սոցիալիզացիայի խնդիրները լուծելու նպատակով, որին մասնակցել են նաև վերջիններիս ծնողները: Այս առումով հատկապես շատ ակտիվ է գործել ԲՄԹ-ՏՄԱԿ-ուսմասվար եռակողմ հանդիպումների ձևաչափը, քննարկվել են ԿԱՊԿՈՒ սովորողների առաջընթացը և հաշվի առնվել ծնողների առաջարկությունները:

Բացի ԿԱՊԿՈՒ սովորողներից, թիմը շատ ակտիվ աշխատել է բոլոր սովորողների հետ՝ բարձր դասարաններում իրականացնելով խորհրդատվություն «Մասնագիտության գիտակցված ընտրություն» թեմայի շուրջ՝ կիրառելով Կլիմովի թեստը, ինչպես նաև 2-9-րդ դասարաններում սոցիալիզացիայի բարելավմանն ուղղված խմբային աշխատանքներ և քննարկումներ «Ընկերասիրություն», «Հասարակության կողմից ընդունելի վարքի ձևեր», «Հիգիենայի կանոններ», «Ո՞վ եմ ես և ինչպիսի՞ն կցանկանայի լինել» թեմաների շուրջ: Այդ աշխատանքներին ակտիվ մասնակցել են նաև ԿԱՊԿՈՒ սովորողները:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐ

Դպրոցի ֆինանսավորումը պետբյուջեից կատարվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից, իսկ 2023 թվականի սեպտեմբերից՝ դասարան թվով: Իրատեսորեն գնահատելով դպրոցի հնարավորությունները՝ ընթացիկ ծախսերը իրականացվելու են օրենսդրությամբ սահմանված կարգով, առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով: Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ:

Հաստիքացուցակը, նախահաշիվն ու ֆինանսատնտեսկան հաշվետվությունները տեղադրված են դպրոցի կայքում: Ֆինանսական միջոցները աճել են՝ պայմանավորված աշակերտների թվի աճով: Ֆինանսական միջոցների աճը հնարավորություն է ընձեռնում բացի աշխատավարձի և կոմունալ ծախսերի բավարարումը, նաև հագեցնել նյութատեխնիկական բազան: Քանի որ դպրոցի շենքը լինելու է նորակառույց, վերանորոգման կամ բարեկարգման աշխատանքներ այս պահին չեն նախատեսվում:

Այս ուսումնական տարվա ընթացքում ձեռք են բերվել համակարգիչներ, պրոյեկտորներ, էկրաններ, տպիչ սարք, պլանշետ՝ բանավոր քննությունները ձայնագրելու նպատակով:

## ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Երևանի Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվետվությունը ներկայացնելիս՝ հաջորդ՝ 2023-2024 ուստարվա համար իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար կատարվել է իրավիճակի ՈՒԹՀԽ (SWOT) վերլուծություն, որը ներկայացված է ստորև:

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| ***Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան*** | |
| • Հաստատության դպրոցի նորակառույց շենքը դեռ գտնվում է կառուցապատման փուլում, որի ավարտից հետո այն կլինի | • 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնառությունը գուցե կազմակերպվի Պ. Յավորովի անվան հ. 131 |

| | |
|---|---|
| ժամանակակից բոլոր չափանիշներին համապատասխան կառույց։<br>• Ուսումնական հաստատության նորառակույց շենքն ունի բավականաչափ կանաչ գոտի և ներքին բակ, որը հնարավոր կլինի օգտագործել տարբեր բացօթյա միջոցառումների համար և ծառայեցնել սովորողների ուսման և դաստիարակման գործընթացին։<br>• Ուսումնական հաստատության նորառակույց շենքն ունի նաև բացօթյա մարզահրապարակ։<br>• Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին։<br>• Ուսումնական հաստատության նորակառույց շենքն ունի ֆիզիկայի, քիմիայի և բնագիտական առանձին կաբինետներ ու լաբորատորիաներ, տեխնոլոգիայի համար նախատեսված կաբինետներ, շախմատի առանձին կաբինետ և ինֆորմատիկայի ու ՆԶՊ առանձին կաբինետ։<br>• Ուսումնական հաստատության նորակառույց շենքն ունի գրադարան ու ընթերցասրահ, հանդիսությունների մեծ դահլիճ։<br>• Նորակառույց շենքն ունի առանձին բուժկետ, որտեղ կարող է տրամադրվել առաջին բուժօգնությունը։<br>• Դպրոցն ունի արևային էներգիայի կայան։<br>• Ուսումնական հաստատության նորակառույց շենքը հարմարեցված է ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքներին։ | հիմնական դպրոցի շենքում՝ 2-րդ հերթափոխով։ |
| **Կառավարման և խորհրդակցական մարմինները** | |
| • Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը։<br>• Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված խորհրդակցական մարմինները՝ մեթոդական միավորումներ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, որոնք | • Դպրոցը չունի հոգաբարձուների և/կամ շրջանավարտների խորհուրդ։<br>• Խորհրդակցական մարմինների ցածր իրավագիտակցությունը նույնպես հանդիսանում է խոչընդոտ։ |

| | |
|---|---|
| կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքներ:<br>• Դպրոցը ակտիվ մասնակցում է համայնքային և համապետական բոլոր միջոցառումներին, շաբաթօրյակներին: | |
| *Մանկավարժական համակազմը* | |
| • Ուսուցիչներն ունեն անհրաժեշտ որակավորում, գիտելիքներ, դասավանդման փորձ, մասնագիտական զարգացման անհրաժեշտ կարողություններ:<br>• Դպրոցի մանկավարժներն ըստ անհրաժեշտության պարբերաբար մասնակցում են մասնագիտական որակավորումների համար կազմակերպվող սեմինարների և ունեն համապատասխան վկայականներ, հավաստագրեր:<br>• Ուսուցիչների մեծ մասը կիրառում է շերտավոր ուսուցում և կարող է կիրառել նոր տեխնոլոգիաներ, համադրել դասավանդման ավանդական և նոր մեթոդները:<br>• Ուսուցիչները համագործակցում են միմյանց հետ:<br>• Դպրոցում աշխատում են կամավոր վերապատրաստմանը մասնակցած 2 ուսուցիչ, իսկ ուսմասվարն ունի 1-ին տարակարգ:<br>• Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն կրթություն՝ մանկավարժի որակավորմամբ: | • Ուսուցիչների ինքնազարգացման մոտիվացիայի պակաս, որը հիմնականում պայմանավորված է ցածր աշխատավարձով:<br>• Ժամանակակից մեթոդների, ՏՀՏ միջոցների ոչ լիարժեք տիրապետումը, ինչպես նաև դրանց հագեցվածության պակասը՝ որպես ուսումնական գործընթացի խոչնդոտ:<br>• «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին, տարակարգի և կամավոր ատեստավորմանը մասնակցելու ցանկության պակաս կամ վախ:<br>• Մանկավարժների պակաս, հատկապես՝ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում (դասվարներ, աշխարհագրության ուսուցիչ և այլն): |
| *Աշակերտական համակազմը* | |
| • Սովորողները արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում:<br>• Ուսման նկատմամբ հետաքրքրությունը տարրական դասարաններում կտրուկ անկում է ապրում միջին դասարաններում:<br>• Վառ անհատականություն ունեցող սովորողներ, ովքեր ունեն սեփական տեսակետը, ես-ը արտահայտելու ձգտում և ցանկություն: | • Ուսման նկատմամբ մոտիվացիայի պակաս, հատկապես տղաների մոտ, քանի որ գուցե չեն կարևորում կրթության դերը մարդու կյանքում:<br>• Նպատակասլացության, պատասխանատվության, ակադեմիական ազնվության ցածր մակարդակ:<br>• Ընթերցանության հանդեպ հետաքրքրության պակաս, նույնիսկ դժվարություն, ինչով էլ պայմանավորված է առաջադիմության ցածր մակարդակը միջին օղակում: |

<table>
<tr><td></td><td>

- Աշակերտների ոչ օբյեկտիվ ինքնագնահատում, սեփական գործունեության կամ անգործունեության հետևանքների պատասխանատվությունից խուսափելու միտում:
- Ընտանեկան բարդ կարգավիճակ /սոցիալական վիճակը, թերի ընտանիք/:
- Ծնողների անտարբերությունը, ոչ օբյեկտիվ մոտեցումը և միջամտությունը, ծնողավարության վերաբերյալ սխալ պատկերացումը:
- Սովորողներից շատերի մոտ, որպես քաղաքացիական հասարակության ակտիվ ներկայացուցիչ, թույլ է կրթության և նախաձեռնողականության մոտիվացիան, իսկ անձնային որակների առումով կա ժողովրդավարական մշակույթի կոմպետենտության զարգացման անհրաժեշտություն:

</td></tr>
<tr><td colspan="2">Հաղորդակցություն, համագործակցություն</td></tr>
<tr><td>

- Դասավանդման ընթացքում սովորողների միջև ձևավորվում է փոխհամագործակցության կապեր, զարգանում է սովորել սովորելու կարողունակություն:
- Իրականացվում են դպրոց-ընտանիք փոխհամագործակցությունն ամրապնդող միջոցառումներ:
- Դպրոցը համագործակցում է քաղաքապետարանի, թաղապետարանի, ԿԳՄՍՆ-ի, ԳԹԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԱԻՆ-ի, գրադարանների, ոստիկանության, Ռուսական տան, Ռուսական գրքի տան, Մոսկվայի տան, մանկապարտեզների, դպրոցների (այդ թվում՝ նաև Արարատի մարզի) և այլ կառույցների հետ:
- Քույր-դպրոց է հանդիսանում Սոլնեչնոգորսկի Ալ. Բլոկի անվան հ. 1 ճեմարանի և Սլովակիայի Բրատիսլավայի Ալ. Էյնշտեյնի անվան գիմնազիայի հետ
- Ձևավորվել է ակտիվ համագործակցություն ծնողական խորհրդի հետ:

</td><td>

- Համագործակցություն այլ մարզերի դպրոցների հետ, հասարակական կազմակերպությունների հետ, միջազգային կազմակերպությունների հետ:
- Կրթության ոլորտով հետաքրքրվողների համագործակցության և ներգրավվածության պասիվություն:

</td></tr>
</table>

| Ուսումնական միջավայրը | |
|---|---|
| • Դպրոցն ապահովված է դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, համալրվել են ռուսական դասագրքերը:<br>• Ապահովված են սովորողների առողջության և անվտանգության պահպանման բոլոր նորմերը: | • 2022-2023 ուստարվա ընթացքում շենքային պայմաններից ելնելով՝ դպրոցը չի ունեցել համապատասխան ուսումնական միջավայր, այսինքն՝ չեն եղել լաբորատորիաներ, պատշաճ կերպով չի գործել գրադարանն ու ընթերցասրահը, բնագիտական առարկաների կաբինետները, ՆԶՊ ու շախմատի կաբինետները: |
| *Կրթության որակը* | |
| • 2022-2023 ուստարվա ընթացքում բուռն կերպով իրականացվել է ներդպրոցական վերահսկողություն՝ կրթության որակի վերաբերյալ օբյեկտիվ պատկեր ունենալու, այն բարձրացնելու, սովորողների մոտ արժեքներ և դիրքորոշում ձևակերպելու, ինչպես նաև ուսուցիչների մոտ որոշ կարծրատիպեր կոտրելու նպատակով:<br>• Նախաիոսքային ընտրության ուղղությամբ տարվել են համակարգված աշխատանքներ:<br>• Դպորցը ԿԶՆԱԿ հիմնադրամի օգնությամբ անդամակցել և ակտիվ մասնակցություն է ունեցել Generation Global-ի միջազգային առցանց համայնքի գործունեությանը:<br>• Ձևավորվել է բարոյահոգեբանական բարձր մթնոլորտ թե՛ սովորողների, թե՛ ուսուցիչների մոտ: | • Շրջանավարտների կոմպետենտության ցածր մակարդակ, ինչը կխանգարի ավագ դպրոցում, իսկ հետագայում նաև ԲՈՒՀ-ում առավել գիտակցված որոշումներ կայացնելուն:<br>• Շատ հաճախ չի կարևորվում յուրաքանչյուր սովորողի հարցը:<br>• Սովորողներն ու ծնողները շատ հաճախ ցուցաբերում են ցածր իրավագիտակցություն:<br>• Ուսուցիչների մոտ ձևավորված կարծրատիպեր և նոր մոտեցմամբ աշխատելու նկատմամբ վախ: |
| *Հնարավորություններ* | **Խոչընդոտներ (վտանգներ)** |

| | |
|---|---|
| • Ուսուցչական համակազմի գերակշռող մասը կիսում է դպրոցի առաքելությունն ու տեսլականը և հայտնում է մեծ պատրաստակամություն։<br>• Դպրոցի արևային էներգիայի կայանի միջոցով կարող են գոյանալ լրացուցիչ ֆինանսական միջոցներ։<br>• Նորակառույց շենքում կա ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու, արտադասարանական խմբակների ու լրացուցիչ ծառայությունների գործարկման բարձր հնարավորություն։ | • Ցավոք սրտի, գոյություն ունի ուսման նկատմամբ համապատասխան արժեհամակարգի և դիրքորոշման պակաս։<br>• Սխալ են գնահատվում ազգային, բարոյական արժեքները, նկատվում է նաև օտարամոլություն։<br>• Դեռևս ամբողջովին չեն վերացվել անբարենպաստ կարծրատիպերը։ |